

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2019 թվականի 9 ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 44146.1 մլն դրամ՝ պլանավորված 41300 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.9 տոկոսով կամ 2846.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 10.5 տոկոսով կամ 4205.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 126 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 19 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 51.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 15 ստուգում՝ 51 մլն դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 66 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 44-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 3-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 7-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 12 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել բռնագանձման հայցերով 1 գործ՝ 34853.5 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 4 հայցադիմում՝ 93 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել է բռնագանձման հայցերով 1 գործ՝ 23373.8 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրության հայցերով 27 գործ՝ 400 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 141 վարչական գործով սահմանվել է 1.8 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7712 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7162:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 49 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում սեպտեմբեր ամսում կատարվել է վերադարձ 12 վարձու աշխատողի՝ 4.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 21 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2019թ. հուլիսի 1-ից ներդրված «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ ԱՀ կառավարության կողմից հաստատվել են «Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանելու մասին», «Հարկային մարմնի կողմից կուտակային հատկացումները և դրանց մասին անձնավորված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու ու սխալների շտկման գործընթացի տեխնիկաթրագրային և ընթացակարգային հարցերը կարգավորելու կարգերը սահմանելու մասին», «Կենսաթոշակային կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրի փոխանցման կարգը, ձևը և ժամկետները սահմանելու մասին» և «Հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրվող այլ տեղեկատվության ցանկը սահմանելու մասին» որոշումները:

Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2019» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը», որոնք ԱՀ կառավարության որոշմամբ 2019 թվականի սեպտեմբերի 23-ից դրվել են կիրառության մեջ:

Հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կողմից պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հասարակայնության հետ կապ

2019 թվականի 3-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 2703 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին են ներկայացվել թվով երկու հայտարարություններ:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 600, ելքագրվել՝ 295 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով: